

«ՍՓՅՈՒՌՔ» ԱՄԱՌԱՅԻՆ ԴՊՐՈՑ. ՄԵԿՆԱՐԿԸ ՏՐՎԱԾ Է



Արդեն 5-րդ անգամ Չայաստանում մեկնարկեց «Սփյուռք» ամառային դպրոցը, որը համատեղ անցկացնում են ՀՀ Սփյուռքի նախարարությունը և ԵՊՀ-ն:

Բացման արահողությանը, որն անցկացվեց ԵՊՀ մեծ դահլիճում, ներկա էին ՀՀ Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը, կրթության և գիտության նախարար Լևոն Մկրտչյանը, ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը, համալսարանականներ, ամառային դպրոցի մասնակիցներ և ուրիշներ:

Այս տարի «Սփյուռք» ամառային դպրոցին մասնակցում է շուրջ 250 հոգի տարբեր երկրների հայկական համայնքներից: Ինչպես նախորդ տարիներին, այս անգամ ևս դասընթացներն անցկացվելու են 5 ուղղություններով՝ «Հայոց լեզվի արագացված ուսուցում» (հուլիսի 3-ից 30-ը), «Հայոց լեզվի և պատմության ուսուցիչների, կրթական գործի կազմակերպիչների վերապատրաստում» (հուլիսի 3-ից 30-ը), «Երիտասարդ առաջնորդների և համայնքային գործի կազմակերպիչների դասընթաց» (հուլիսի 3-ից 16-ը), «Լրագրողների վերապատրաստում» (հուլիսի 3-ից 16-ը) և «Ազգային երգի ու պարի վարպետություն» (հուլիսի 3-ից 16-ը):

«Ես շնորհակալ եմ բոլոր մասնակիցներին, ովքեր պատրաստ են ամեն պահի սովորել ու զարգանալ: Դուք շատ լավ գիտեք, որ հայագիտությունն ու հայկական մշակույթը ծնվում են հայրենիքում: Արդեն 5-րդ տարին դպրոցի 1000-ից ավելի ունկնդիրներ գալիս են Չայաստան ու մեկընդմիջտ կապվում հայրենիքի հետ», - ողջունելով ներկաներին՝ նշեց Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը և տեղեկացրեց, որ համաձայնություն է ձեռք բերել հաջորդ տարի ամառային դպրոցը նաև Կրթության և գիտության նախարարության հետ համատեղ կազմակերպելու մասին:

ՀՀ ԿԳ նախարար Լևոն Մկրտչյանն էլ իր ելույթում կարևորեց Սփյուռքի դպրոցների դերը. «Սփյուռքը պահպանվում է 3 կայուն հիմքերի վրա՝ դպրոց, հայ կենտրոն և եկեղեցի: Այսպիսի հանդիպումները, բանակումները, վերապատրաստումները նախնառաջ լավ առիթ են, որպեսզի մենք հասկանանք յուրաքանչյուր համայնքի խնդիրները, յուրահատկությունները, որպեսզի կարողանանք լուծման ուղիներ գտնել»:

ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանն է, ով ամառային դպրոցի գործունեությանը ծանոթ է անցկացման առաջին իսկ տարվանից, վստահեցնում է, որ տարեցտարի այն կատարելագործվում է թե՛ կազմակերպչական, թե՛ բովանդակային առումներով:

Թեպետ ամառային դպրոցի բացման արարողությունը տեղի ունեցավ այսօր, սակայն դասընթացները մեկնարկել էին օրեր առաջ: Դեռևս հուլիսի 2-ին կայացած հանդիպման ժամանակ մասնակիցներին ներկայացվեցին ոչ միայն դասընթացների մանրամասներն ու ժամանակացույցը, այլև «Սփյուռք» ամառային դպրոցի պաշտոնական կայքը (www.dss.am), որը, հարուստ ինֆորմացիա տրամադրելուց բացի, նաև լավ հարթակ է բոլոր տարիների մասնակիցներին մեկ հարթակում համախմբելու համար:



Բացի տեսական ու գործնական պարապմունքներից՝ առաջիկա օրերին ամառային դպրոցի մասնակիցների համար կկազմակերպվեն նաև մշակութային միջոցառումներ, այցելություններ Հայաստանի պատմական ու տեսարժան վայրեր, հանդիպումներ պետական, հասարակական, մշակութային գործիչների, հոգևոր այրերի հետ:

Ամառային դպրոցի բացման արարողության պաշտոնական մասին հաջորդեց համերգային ծրագիրը, որը կազմակերպել և ներկայացնում էր ԵՊՀ մշակույթի կենտրոնը: